«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱԱՌԱԿԸ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԱՌԱՐԿԱ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ և ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿ ՄԵԼԱՆՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՄԱՐԶ ՇԻՐԱԿ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԱԼԻԿԻ ԹԻՎ 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ՝ 3

2. Առակը որպես սովորողների արժեհամակարգի ձևավորման միջոց

ա. Ինչ է արժեհամակարգը և ինչպես է ձևավորվում այն 5

բ. Ժողովրդական բանահյուսություն. առակ. 6

գ.Առաջին առակների հեղինակը. 7

3. Հետազոտական մաս. 9

4. Եզրակացություն. 23

5. Գրականության ցանկ. 24

Ներածություն

Մանկավարժությունը որպես գիտություն զբաղվում է սերունդների կրթության, դաստիարակության եւ զարգացման հիմնախնդիրներով: Կարելի է ասել՝ գիտություն է, որը հետազոտում է կրթության, դաստիարակության եւ զարգացման խնդիրներն ու օրինաչափությունները:՝[1 էջ 9]

Չեխ մեծ մանկավարժ Յան Ամոս Կոմենսկին առաջինն էր որ հիմնավորեց մարդու՝ մինչև նրա կյանքի վերջը կրթելու և դաստիրակելու հարցը: Ժամանակակից մանկավարժության նպատակն է դաստիարակել, կերտել քննադատական միտք ունեցող, ինքնուրույն, ինքնակրթությամբ մշտական

զարգացումը կարեւորող, բարձր պատասխանատվությամբ հասարակության անդամ, անհատ, որը կկարողանա համարձակ ընդառաջ գնալ այն բոլոր մարտահրավերներին, որոնք ընթացող ժամանակը մշտապես դնելու է իր, իր հայրենիքի եւ աշխարհի առջեւ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտությունը ներկայացնում է առակներն ու դրանց ուսուցումը հիմնական դպրոցի հինգերորդ դասարանում: Մենք ներկայացնում ենք առակը, որպես ուսուցման կարևորագույն բաղադրիչ և աշակերտների գիտելիքների, հմտությունների ու կարողունակությունների ձևավորմանը նպաստող գործոն:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ուսումնասիրության նյութ հանդիսացող առակները տոգորված են հայրենասիրական բարձր ոգով, քարոզում են սեր, հոգատարություն,

համերաշխություն, ընկերասիրություն, եւ նպաստում են երեխաների ժողովրդավարական արժեհամակարգի ձևավորմանը: Այս գործերում մերժվում են սուտն ու կեղծիքը, չարն ու մերժելին , որոնք իսկապես ահռելի թափ են ստացել վերջին ժամանակներում:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՈՒսումնասիրության նպատակն է արդի մեթոդներով ներկայացնել առակների ուսուցումը հինգերորդ դասարանում, սովորողների մեջ ձևավորել մարդկային վեհ արժեքներ՝ հարգանք, ճշտախոսություն, մեծին հարգելու, լավությունը գնահատելու կարողություն:

Արժևորել սիրո, հայրենասիրության, բարու, ազնվության դերը եւ ցույց տալ դաժանության, ստի, անհնազանդության, երախտամոռության վատ հետևանքները։

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Առակի ուսուցումը որքանո՞վ կնպաստի սովորողների ազգային եւ ժողովրդավարական արժեհամակարգի ձևավորմանը։

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Առակի ուսուցումը եւ բարոյախոսության ճիշտ ըմբռնումը կնպաստի արժեհամակարգի, կարողունակությունների ձևավորմանը։ Կօգնի դաստիարակել լավ մարդ եւ հասարակությանը պիտանի քաղաքացի։

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

● Կարժևորվի առակի ուսուցման դերը հիմնական դպրոցում։

● Առակի ուսուցումը կդիտարկվի այլ տեսանկյունից, կկիրառվեն դասավանդման ժամանակակից մեթոդներ եւ հնարներ։

● Կներկայացվի առակների դերը անհատի զարգացման գործում։

● Կպարզվի, թե առակի ուսուցումը որքանով կնպաստի սովորողների ազգային եւ ժողովրդավարական արժեհամակարգերի ձևավորմանը։

Առակը որպես սովորողների արժեհամակարգի ձևավորման միջոց մայրենիի դասավանդման ընթացքում

1. **Ինչ է արժեհամակարգը, և ինչպես է ձևավորվում այն**

ԼԻՆԵԼ ՄԱՐԴ-ԱՀԱ ԹԵ ԻՆՉԻՆ ՊԻՏԻ ԲԵՐԻ ԵՐԵԽԱՅԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Նիկոլայ Պիրոգով

(ռուս գիտնական, մանկավարժ, վիրաբույժ)

Աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ պետական չափորոշչում՝ որպես կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկա գիտելիքների պատրաստվածության չափին զուգահեռ նշում է սովորողի արժեհամակարգի ձևավորման չափանիշները: << Արժեհամակարգ >> հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ընդունվում է լայն շառավղով :Առավել ընդունելի է այն ընկալումը,որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային, էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ և բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Արժեհամակարգի կարևոր բաղադրիչներից են հայրենասիրությունը, սեփական ժողովրդի պատմությունը, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացողություն: Ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակությունն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝

ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեական, կրթական, հասարակական, սոցիալական: Հաշվի առնելով այս և այլ բազմաթիվ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության և մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակման գործում լուրջ անելիքներ ունի դպրոցը,որի գերնպատակն է կերտել բարոյական , ազգային արժեքներով օժտված ազգային նկարագիր ունեցող սերունդ:Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել և կատարելագործել համաշխարհային և հայրենի գիտությունները, մանկավարժության անցյալի ժառանգությունը և ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը, երեխայի մեջ ձևավորել հոգևոր և մշակութային արժեքներ , պահպանել և փոխանցել այն, ինչ ժառանգել ենք նախնիներից: ՈՒսումնասիրել մշակութային բարձրարժեք ստեղծագործություններ, որտեղ արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարները, գալիքի երազանքները, որտեղ նկարագրվում են մեր ազգի հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, վերածնվելու , հարատևելու ունակությունը, համախմբվածությունը, բարոյական արժանիքները: Այս ամենն է անհրաժեշտ ավանդել ժամանակակից էթնոկրին:

2. Ժողովրդական բանահուսություն.առակ

Մարդկության պատմական զարգացման ընթացքում պատմիչները, գուսանները,աշուղները, սացողները վիթխարի դեր են կատարել՝ ստեղծելով բանահյուսական նմուշներ՝ հեքիաթներ, առակներ,ասացվածքներ՝ ապահովելով սերունդների հոգևոր-մշակութային կերտվածքի ձևավորումը :Բանահյուսությունը յուրաքանչյուր ժողովրդի ստեղծած ազգային հարուստ ժառանգությունն է, ազգային ինքնության նախահիմքը:[2 էջ3]

Առակը ժողովրդական բանահյուսության հնագույն տեսակներից է:

Առակ (առ ակն՝ աչքի առաջ) բարոյախոսական բնույթի գրական ստեղծագործություն է, որտեղ այլաբանորեն ներկայացվում , ծաղրվում և քննադատվում են մարդկանց արատները: Առակը ստեղծվել է կենդանիների մասին պատմող հեքիաթների (կենդանական էպոսի) հիման վրա :Նրա կառուցվածքային առանձնահատկությունները մինչև օրս գրեթե չեն փոխվել: Նրանց մեջ անձիք մարդիկ են՝ այս կամ այն կենդանու կամ բույսի կերպարանքով :Առակների այս այլաբանության

հատկանիշները հիմնված է կենդանիների լայնորեն հայտնի գծերի՝ աղվեսի խորամանկության, գայլի ագահության,էշի հիմարության, նապաստակի վախկոտության , առույծի ուժի հաշվառման վրա:[3էջ288]

Առակի վերջում հեղինակը դրսևորում է իր հատուկ վերաբերմունքը նկարագրածի հանդեպ , որն էլ առակի բարոյախոսությունն է:

Անտիկ շրջանում և միջնադարում առակները արձակ ժանրի ստեղծագործություններ էին, սակայն հետագայում դրանք սկսեցին գրվել նաև չափածո:

Առակի վարպետներ են Եզոպոսը,Ֆեդրոսը,Ժան դը Լաֆոնտեն, Իվան Կռիլովը, հայ հեղինակներից Մխիթար Գոշը, Վարդան Այգեկցին, Խնկո Ապերը և ուրիշներ:Առակի հերոսը մարդն է,ում կյանքի, բնավորության հոռի, բացասական գծերը ծաղրվում են այլաբանորեն: Առակներում բույսերը, կենդանիները խոսում են մարդկային լեզվով , աշխատում, օգնում կամ խանգարում են միմյանց: Առակներում գովաբանվում և խրախուսվում են լավը, բարին, բարոյականությունը, ջանասիրությունը, հայրենասիրությունը, ծաղրվում ու դատապարտվում վատը,տգեղը, դավաճանությունը,վախկոտությունը:

Հնում <<առակ>> բառը նշանակել է նաև խրատ, իմաստություն:Այդպիսիք են Աստվածաշնչում պահպանված Սողոմոնի առակները, որոնք մեծ ազդեցություն են թողել գրեթե բոլոր ժողովրդների մտածելակերպի վրա:

3. Առաջին առակների հեղինակը

Մինչև օրս պահպանված աղբյուրների համաձայն առաջին առակների հեղինակը եղել է ստրուկ Եզոպոսը Սամոս կղզուց: Ըստ որոշ աղբյուրների՝ նրա տերը կոչվում էր Յադմոն, մյուսների համաձայն՝Քսանթ:Եզոպոսը դարեր շարունակ հայտնի դարձավ իր արտասովոր մտքով և

իմաստությամբ, տիրոջը կարևոր խորհուրդներ տալու ունակությամբ ,որի համար նրան ազատություն է շնորհվել: Եզոպոսի առակների առանձնահատկությունն այն է, որ այլաբանորեն նկարագրում էր իր տիրոջ հուզիչ իրավիճակը և դրանից դուրս գալու ճիշտ ելքը: Եզոպոսի առակներն իրենց սկզբնական տեսքով չեն պահպանվել: Դրանք հետո փոխանցվել են բերանից բերան, սերնդեսերունդ և գեղարվեստորեն մշակվել և գրվել լատիներեն և հունարեն մեր դարաշրջանի բանաստեղծների կողմից(Phaedrus-I դար), Բաբրիուս –II դար և Avian-V դար);[4]

Եղոպոսի առակները հայ ընթերցողին հասանելի են դառնում VII-դարում հայերեն թարգմանությունների միջոցով :

Հայ գրավոր գրականության մեջ առակները թափանցել են միջնադարի գիտնական, պետական գործիչ և մանկավարժ Գրիգոր Մագիստրոսի միջոցով:

Հայ գրավոր գրականության մեջ առակները թափանցել են միջնադարի գիտական , պետական գործիչ և մանկավարժ Գրիգոր Մագիստրոսի միջոցով: Նա իր թղթերում օգտագործել է ամենատարբեր առակները:

Ինչպես երևում է իր նամակներից ,նա պատվիրում է դպրոցներում աշակերտներին սովորեցնել քերականության և ճարտասանության հետ նաև առասպելավարժություն, այսինքն՝ աշակերտներին գրել, անգիր անել և մեկնաբանել որոշ առակները,որոնք շատ հարմար վարժություններ են եղել ապագա մեկնաբաններ պատրաստելու համար:

Այսպես, 12-13-րդ դարերում արդեն հանդես են գալիս նշանավոր առակագիրները Մ.Գոշը և Վ. Այգեկցին:

Առակը որպես գրական տեսակ ստեղծվեց, քանի որ մարդ արարածը սիրում է սովորել օրինակով, ընդօրինակելը նրա համար ավելի հեշտ է , քան վերացական խրատը:

Այն դաստիարակչական նպատակ ունեցող գրական տեսակ է և օգնում է մարդուն իրական կյանքում ավելի հեշտ ապրելու,և առակները այս առումով սիրված են և շարունակում են մնալ:

Առակները իրենց ծավալի սեղմությամբ և իմաստի ընդարձակությամբ մոտենում են առածներին և հանդիսանում են նրանց հիմնավորումն ու մեկնաբանությունը: Երբեմն շատ առակներ ավարտվում են առածներով .<<Հմեն գահ տերտեր գաթա չուտեր >>, <<Աշխարք առաջվա աշխարք չէ>>, <<Քոռ գրելու աստվածն եմ ապավինել>>:[3էջ300] ՈՒսուցիչը պետք է ուշադրություն դարձնի ոչ միայն գիտելիք հաղորդելու խնդրին, այլև երեխաների բարոյական դաստիարակության հարցերին, նրանց արժեհամակարգի ձևավորմանը:

Հետազոտական մաս

Հինգերորդ դասարանի աշակերտներն օժտված են ստեղծագործական մտածողությամբ, որը պետք է զարգացնել: Այդ պատճառով էլ նրանց համար նախատեսված «Մայրենիի» դասագրքերի հիմնական բովանդակությունը հրաշապատումային է՝ ներկայացված գունագեղ նկարազարդումներով, ժողովրդական բառ ու բանով՝ առածներով ու ասացվածքներով, դարձվածքներով ու թեւավոր խոսքերով, առակներով ու հեքիաթներով:

Հիմնական դպրոցում առակի ուսուցման ընթացքում անհրաժեշտ է նկատառել հետեւյալ նրբությունները.

1. Նպատակահարմար չէ աշակերտներին անմիջաբար «հրամցնել» առակի այլաբանական եւ փոխաբերական իմաստները. սովորողն ինքը պետք է բացահայտի եւ վերլուծի առակի բարոյախրատական ուղղվածությունը, հասկանա, թե առակի մեջ որն է իրականը, որը՝ երեւակայականը:

2. Բարոյախրատական իմաստի բացահայտումից հետո ցանկալի է համապատասխան խորհուրդ ունեցող առածների եւ ասացվածքների միջոցով ամրակայել սովորողների գիտելիքները:

3. Հարկավոր է ոչ միայն դերերով կարդալ առակը, այլեւ բեմականացնել նրա բովանդակային հատվածները:

Ժողովրդական ստեղծագործությունները ուսուցանվում են երկու հիմնական փուլերով՝ բովանդակության հաղորդմամբ եւ երեւակայական կողմի բացահայտմամբ:Այժմ կրթական համակարգը, ուսուցման մեթոդները եւ տեղեկատվական տեխնոլոգիաները ընձեռում են բազմաթիվ հնարավորություններ դասը հետաքրքիր, գունեղ, տարբերվող ու բովանդակալից դարձնելու համար: Հատկապես առակների ուսուցումը կարելի է կազմակերպել օգտվելով այս հնարավորություններից:

Դասագրքում առաջինը ներկայացված է Վարդան Այգեկցու «Առյուծ ու մարդ» առակը: Առակի հիմնական գաղափարը մեծի խոսքն ու խրատը լսելն է: Մեծերը միշտ երեխաների լավն են

ցանկանում եւ նրանց խորհուրդները միշտ օգտակար են երեխաների համար։ Առյուծը նստել էր ճանապարհին, եւ զարմացած հետեւում էր թե ինչպես են տեսակ-տեսակ գազաններ դողալով գալիս եւ անցնում։ Առյուծի այն հարցին թե ինչու են նրանք այդպես փախչում, գազանները պատասխանում են, որ մարդն է գալիս։ Ինքնահավան առյուծը մնում է իր տեղում եւ ծաղրում հողագործին։ Նա առաջարկում է մարդուն կռվել, եւ մարդը համաձայնում է։ Քանի որ << զենքերը>{ իր մոտ էին, մարդն առաջարկում է նրան կապել ծառին, որ չփախչի, մինչեւ ինքը գնա իր զենքերի հետեւից։ Առյուծը համաձայնվում է։ Մարդը նրան կապում է ծառից, մի բիր կտրում եւ սկսում ծեծել առյուծին։ Առյուծը ցավից մռնչալով գոռում է «-Եթե դու մարդ ես, ավելի խիստ եւ անխնա՛ զարկիր իմ կողերին, որովհետեւ այս խելքին այդպես է վայել»։ [5 էջ 142] Այս գաղափարն արտահայտող առակներ ունի նաեւ Եզոպոսը։ Նրանցից մեկը կոչվում է «Մարդը, առյուծն ու նրա կորյունը»։ Մի ամայի վայրում մարդ էր ապրում եւ ամենուր ծուղակներ դնում։ Առյուծը այլ ելք չունենալով թողնում եւ իր կորյունի հետ հեռանում է։ Երբ կորյունը մեծանում է, հարցնում է հորից, իրենք 3բնի՞կ են, թե՞ ոչ։ Հայրը պատմում է, թե ինչպես են հեռացել իրենց տնից։Կորյունը, չլսելով հորը, գնում է վրեժ լուծելու մարդուց։ Նա մեղադրում է եզին ու ձիուն, որ ենթարկվում են մարդուն։ Հանդիպում է մարդուն, եւ նրանք որոշում են գնալ առյուծի մոտ դատի, բայց պայմանով, որ ճանապարհին իրար չեն վնասի։ Մարդը, շեղվելով ճանապարհից, գնում է թակարդների կողմը։ Կորյունը դիմացի թաթերով ընկնում է թակարդի մեջ, հետո այնքան է շարժվում, որ ետեւի ոտքերն էլ գցում է թակարդի մեջ։ Այդ ժամանակ մարդը մի մահակ է կտրում եւ ծեծում կորյունին։ «Կորյունը խնդրում է մարդուն, որ մարդը իր գլխին ու ականջներին խփի, քանի որ չլսեց իր հորը եւ դրա համար չարաչար պատժվեց։ Մարդը լսեց եւ այնքան հարվածեց գլխին ու ականջներին, որ նա շունչը փչեց»։[6 էջ 257]

Վերեւում ներկայացված առակի ուսուցումը կարելի է կազմակերպել ԽԻԿ (խթանում, իմաստավորում, կշռադատում) համակարգով։ Դասի նպատակներն են՝ արժեւորել խելքի դերը եւ թույլ տալ, որ սովորողներն ինքնուրույն հանգեն այն եզրահանգման, որ կյանքում նպատակներին հասնելու համար ոչ միայն ուժ, այլ խելք է անհրաժեշտ։

Խթանման փուլում կարելի է կիրառել «Հինգրոպեանոց շարադրանք» մեթոդը։ Սովորողներին հանձնարարել գրել իրենց կարծիքով որն է ավելի կարեւոր՝ ո՞ւժը, թե՞ խելքը։ Իմաստավորման փուլում կարելի է կիրառել «Բանավեճ» մեթոդը։ Սովորողները բաժանվում են երկու խմբի։ Առաջին խմբում այն աշակերտներն են, ովքեր մտածում են, որ կարեւոր է ուժեղ լինելը։ Երկրորդ խմբում այն աշակերտներն են, ովքեր մտածում են, որ կարեւոր է խելացի լինելը։

Խմբերին տրամադրվում է տասնհինգ րոպե ժամանակ, որի ընթացքում յուրաքանչյուր խումբ պետք է բերի համապատասխան փաստարկներ եւ ապացուցի իր տեսակետը։ Այնուհետեւ ուսուցիչը

կարդում է առակը, քննարկման միջոցով վեր են հանում առակի բարոյախոսությունը, կատարում տեքստային աշխատանք: Կշռադատման փուլում «Քառաբաժան» մեթոդի միջոցով ներկայացնում են իրենց տեսածը, լսածն ու զգացածը, հայտնում իրենց կարծիքը կարդացածի մասին:

Ի՞նչ տեսա	Ի՞նչ լսեցի
Ի՞նչ զգացի	Կարծիք կարդացածի վերաբերյալ

Կատարել անդրադարձ եւ պարզել թե սովորողներն ի՞նչ նոր բան սովորեցին, ի՞նչը լավ արեցին այդ օրը: Յուրաքնչյուր առակի բարոյախոսությունը, գաղափարը կարելի է արտահայտել ասացվածքների, թեւավոր խոսքերի միջոցով:

Օրինակ այս առակի պարագայում կարելի է ասել «ՈՒԺի հետ մեկտեղ խելք է անհրաժեշտ»: Անհրաժեշտ է թողնել, որ աշակերտն ինքը կատարի եզրահանգում:

Ադոլֆ Դիստերվերգը ասել է «Վատ ուսուցիչը ճշմարտություններ է հաղորդում, իսկ լավ ուսուցիչը սովորեցնում գտնել դրանք»:

Վաղուց ապացուցված է, որ ավելի մնայուն է սեփական ջանքերով ձեռք բերված գիտելիք: ՈՒսուցչի գերխնդիրը պիտի լինի դրդել աշակերտին աշխատել, սեփական ուժերով բացահայտել, վերլուծել եւ ուսումնասիրել գիտելիքների հարուստ գանձարանը, անել սեփական դատողություններ եւ հանգել եզրահանգումների:

Հանձնարարել տնային աշխատանք դասագրքից:

Հաջորդ առակը Հովհաննես Շիրազի «Մարգարիտն ու փրփուրը» առակն է:

Առակի հիմնական գաղափարը համեստությունը, սեփական արժեքը գնահատելն է։ Ծովի երեսին ելած փրփուրը սկսում է գովերգել ինքն իրեն, նսեմացնել մարգարիտի արժեքը, որը գտնվում էր ծովի հատակին։

Բայց այսպես խոսեց փրփուրն այդ մասին.

— Ինչո՞ւ տեղ չունես ծովի երեսին,

Թե մարգարիտ ես… Էլ ի՞նչ մարգարիտ,

Ես եմ մայր ծովի գանձը ճշմարիտ,

Որ միշտ ջրերի երեսն եմ ելնում,

ՈՒ ես եմ փայլում,

Եվ կյանքը վայելում5Էջ144]

Բայց մի փոքրիկ քամին փրփուրը ցրեց եւ նրա հետքն էլ չմնաց։ Նույն էլ մարդկանց պարագայում է. ինքնահավան, չարամիտ մարդիկ չեն կարողանում հաջողության հասնել, իսկ ծանրակշիռ, հանգիստ, համբերատար ու ազնիվ մարդիկ միշտ հասնում են հաջողությունների։ Այս դասի ընթացքում աշակերտները սահիկաշարերի միջոցով կծանոթանան մարգարիտ քարի պատմությանն ու օգտակար հատկություններին, կընթերցեն Հովհաննես Շիրազի «Մարգարիտն ու փրփուրը» բանաստեղծությունը, քննարկում-զրույց կանցկացնեն բարու եւ չարի, արդարության եւ անարդարության, համեստության եւ գոռոզության մասին։

Խթանման փուլում կարելի է օգտագործել անակնկալ հարցադրում մեթոդը եւ աշակերտների հարցնել, թե իրենց կարծիքով ի՞նչ հատկանիշներով պետք է օժտված լինի լավ մարդը։ Այնուհետեւ առաջարկել ասել, թե ինչ կապ կարող է ունենալ այդ հարցը ուսումնասիրվելիք նյութի հետ։ Իմաստավորման փուլում, ուսուցչի կարդալուց հետո, սկսում է քննարկում, որի ընթացքում արժեւորվում են համեստությունն ու ազնվությունը եւ քննադատվում կեղծիքն ու եսասիրությունը։

Քննարկման ավարտից հետո կարելի է կիրառել Վենի դիագրամ մեթոդը։ Մի կողմում ներկայացնել մարգարիտ-մարդուն, իսկ մյուս կողմում՝ փրփուր մարդուն։

Մարգարիտ մարդ	Փրփուր մարդ

Կշռադատման փուլում կարելի է կիրառել զրույց մեթոդը եւ սովորողներին տալ հնարավորություն, որ նրանք ազատ արտահայտվեն, ներկայացնեն իրենց կարծիքն ու դիտարկումները թեմայի վերաբերյալ: Նյութն ուսումնասիրելուն զուգահեռ կատարվում է նաեւ բառային աշխատանք, բացատրվում են անծանոթ բառերը, վերհիշում անցած քերականական նյութը։ Աշակերտները լրացնում են առցանց գործիքով կազմված հարցաշար։ Հանձնարարվում է տնային աշխատանք, որը կարող է լինել եւ՛ դասագրքից, եւ՛ դրանից դուրս։

Հաջորդ առակը, որը զետեղված է դասագրքում Աթաբեկ Խնկոյանի «Խխունջն ու սունկը» առակն է։

Այս առակում սունկի վրա նստած խխունջը բողոքում է ճպուռի թռչկոտելուց, թիթեռների թռչելուց, թռչունների ծլվլալուց։ «-Է՜, քուրի՛կ խխունջ,- հառաչում է սունկը,- գիտե՞ս՝ ինչո՛ւ ենք լուռումունջ մնացել էստեղ. ո՛չ թռչել գիտենք եւ ո՛չ էլ երգել»[5 էջ148]Յուրաքանչյուր առակ ունի բարոյախրատական ահռելի նշանակություն։ Առակի լիարժեք ու մանրակրկիտ ուսումնասիրությունը հսկայական ազդեցություն ունի աշակերտների ժողովրդավարական արժեհամակարգի ձեւավորման հարցում։

Այս առակում հեղինակը քննադատում է եսասիրությունը, նախանձն ու չկամությունը։ Խթանման փուլը սկսել «Մտագրոհ» մեթոդով, որի ընթացքում ուսուցիչը գրատախտակին գրում է նախանձ բառը, իսկ աշակերտները նշում են այն բառերը, որոնք իրենց մտքում ասոցացվում են նախանձ բառի հետ։



Իմաստավորման փուլում աշակերտներին հանձնարարել մտաբերել այնպիսի ստեղծագործություններ, որոնց հիմնական գաղափարը համապատասխանում է առակի բարոյախոսությանը, համեմատել դրանք, առանձնացնել շարադրանք մեթոդը եւ հանձնարարել աշակերտներին ներկայացնել եսասիրության վատ կողմերը եւ ներկայացնել կատարյալ մարդու իրենց իդեալը։

Հաջորդիվ ներկայացվում են Եզոպոսի «Աղվեսն ու հովազը», «Գայլերն ու ոչխարները» եւ «ՈՒղեւորներն ու սոսին» առակները։ Առաջին առակում աղվեսն ու հովազը վիճում են, թե իրենցից ով է ավելի գեղեցիկ։ Հովազը պարծենում է իր նախշավոր մորթիով, իսկ աղվեսը նրան պատասխանում է. «Ես քեզանից շատ ավելի գեղեցիկ եմ, քանի որ ոչ թե մարմինս է նախշուն, այլ հոգիս է ճարտար ու ճկուն»[5էջ150]

Առակի հիմնական գաղափարը այն, որ խելքն ու մտքի ճկունությունը ֆիզիկական գեղեցկությունից առավել կարեւոր եւ ցանկալի են։

Խթանման փուլում գրատախտակին գրել «Ոչ թե նա է ուժեղ, ով ուժ ունի, այլ նա, ով...» նախադասությունը եւ հանձնարարել աշակերտներին շարունակել այն եւ ներկայացնել սեփական կարծիքը։ Աշխատելու համար տրամադրել երեք րոպե ժամանակ։ Երբ աշխատանքը կավարտեն կազմակերպել քննարկում, զուգադրել կարծիքները։ Իմաստավորման փուլում կադալ առակը, քննարկել եւ արժեւորել առակի բարոյախոսական գաղափարը։ Այնուհետեւ «Երկսյուն աղյուսակ» մեթոդի կիրառումով ներկայացնել հովազի եւ աղվեսի կերպարները։

Հովազ	Աղվես

Քննարկման միջոցով աշակերտներին ուղղորդել հասնելու այն եզրահանգման, որ գիտելիքն ու խելքը շատ կարեւոր գործոններ են կյանքում հաջողության հասնելու ճանապարհին։ Այս առակի ուսուցման ժամանակ կարելի է արժեւորել գիտելիքի, սովորելու, աշխատանքի դերը մարդու կյանքում եւ ցույց տալ չսովորելու, ծուլության վատ հետեւանքները։

«Գայլերն ու ոչխարները» առակում հեղինակն այլաբանորեն ներկայացնում է թշնամուն վստահելու եւ հարազատին դավաճանելու հետեւանքները: Այս առակում արժեւորվում են հավատարմությունը, ազնվությունը եւ դրվատվում են կեղծիքն ու շահամոլությունը: Գայլերը կարողանում են համոզել ոչխարներին, որ իրենց թշնամանքի պատճառը շներն են: Նրանք պնդում են, որ եթե շները չլինեն, իրենք հաշտ ու խաղաղ կապրեն: Հավատալով գայլերի խոսքերին՝ ոչխարները հանձնեցին շներին:

Եվ այն ժամանակ գայլերը, որ ավելի ուժեղացել էին, առանց դժվարության հաշվեհարդար տեսան անպաշտպան հոտի հետ:

Մեր ժողովուրդը դարեր շարունակ արյան գնով է պաշտպանել իր ապրելու իրավունքը: Մեր օրերում շատ կարեւոր է, որ մենք դաստիարակենք հայրենասեր, գիտակից եւ խելացի աշակերտներ, ովքեր մեր ապագայի երաշխավորն են լինելու:

Խթանման փուլում կարելի է կիրառել «Խառնված հերթականություն» մեթոդը: Սովորողներին բաժանել թերթիներ, որոնց վրա գրված է Վարդան Այգեկցու «Գայլերն ու այծերը» առակը խառնված հերթականությամբ եւ հանձնարարել վերականգնել ճիշտը: Իմաստավորման փուլում կարելի է կիրառել «Մտածի՛ր-զուգադրի՛ր-մտքեր փոխանակի՛ր» մեթոդը: Աշակերտներին տալ նախապես կազմված, բաց հարցեր, եւ հանձնարարել կարճ պատասխանել դրանց: Այնուհետեւ աշակերտները զույգեր են կազմում եւ միմյանց հետ մտքեր փոխանակում՝ փորձելով գտնել այն պատասխանը, որը ամբողջացնում է իրենց երկուսի պատասխանները:

Հարցերի ցանկ

● Բացատրե՛ք՝ ինչու գայլերը շների ներկայությամբ չէին մոտենում ոչխարներին։

● Բացատրե՛ք՝ ինչպես կարողացան գայլերը խաբել ոչխարներին։

● Ո՞րն է առակի հիմնական գաղափարը։

● Ի՞նչ կլիներ, եթե գայլերը չլսեին ոչխարներին։

Կշռադատման փուլում կարելի է կիրառել «Քառաբաժան» մեթոդը

Աշակերտները կլրացնեն աղյուսակը, կխոսեն իրենց զգացածի, լսածի, տեսածի մասին, կարտահայտեն իրենց կարծիք ստեղծագործության վերաբերյալ։ Մեթոդը բավականին արդյունավետ է եւ նպատակահարմար հիմնական դպրոցի աշակերտների ստեղծագործական մտածողությունը զարգացնելու համար։

Վերջում կարելի է անդրադարձ կատարել, պարզել թե աշակերտները որքանով են յուրացրել նյութը եւ ինչ արժեհամակարգ է ձեւավորվել։

«ՈՒղեւորներն ու սոսին» առակում ուղեւորները, կեսօրվա շոգից հոգնած, ճանապարհ էին գնում։ Նրանք տեսան սոսի ծառը եւ պառկեցին նրա ստվերում հանգստանալու։ Նրանք սկսեցին խոսել ծառի մասին եւ նշել, որ այն անպտուղ է եւ մարդկանց համար անօգուտ։ Սոսին նրանց ապերախտ անվանեց, քանի որ օգտվում են իր հովանուց եւ նույն պահին իրեն անպտուղ անվանում։ Այստեղ

այլաբանորեն ներկայացվում է մարդու բարությունը, հյուրընկալությունն ու ազնվությունը, ինչին հեղինակը հակադարձում է մյուսների ապերախտությունն ու եսասիրությունը։ Ցավոք, մեր իրականության մեջ շատ են դեպքերը, երբ ուրիշներին լավություն անող մարդն անգամ շնորհակալության չի արժանանում։

Խթանման փուլում կարելի է կիրառել **«Բանալի բառեր»** մեթոդը։ Ուսուցիչը թվարկում է ուսումնասիրվելիք թեմային վերաբերող բանալի բառեր, իսկ աշակերտները փորձում են գուշակել, թե ինչի մասին է կամ ինչ են ուսումնասիրելու այս դասին։ Թեմային վերաբերող բանալի բառերն են՝

երախտամոռություն, հյուրընկալություն, եսասիրություն, բնություն, օգնություն։

Իմաստի ընկալման փուլում նպատակահարմար է օգտագործել **«Երկայուն աղյուսակ»** մեթոդը։

Սոսի	ՈՒղևորներ

Լրացնելուց հետո աշակերտները ներկայացնում են իրենց կարծիքները, քննարկում, զուգադրում են մտքերն ու վերհանում առակի հիմնական բարոյախոսական իմաստը։

Կշռադատման փուլում կարելի է օգտագործել «Հինգրոպեանոց շարադրանք» մեթոդ, եւ հանձնարարել աշակերտներին գրել, ըստ իրենց, ինչ պիտի անեին ուղեւորները եւ արդյո՞ք ծառը ճիշտ պատասխանեց նրանց։ Կատարել անդրադարձ եւ աշակերտներին տալ հետեւյալ հարցերը՝

● Ի՞նչ արեցիք դուք այսօր։

● Ինչո՞ւ։

Աշակերտներին հանձնարարվում է գրավոր աշխատանք, որը կարող է լինել ինչպես դասագրքից, այնպես էլ ստեղծագործական աշխատանք։ Օրինակ՝ այս դասի պարագայում կարելի է հանձնարարել ինքնուրույն գրել որեւէ առակ, որի հիմնական բարոյախոսական իմաստը կհամապատասխանի իրենց ուսումնասիրած առակին, ինչպես նաև առակի հատվածի տեսապատկերը նկարել։

Այս ընթացքում աշակերտները ուսումնասիրում են «Տողադարձ» թեման։ Առակի բարոյախոսության ուսումնասիրմանը զուգընթաց, կարելի է ամեն դասին խոսել տողադարձի մասին, անընդհատ բերել օրինակներ, ուսումնասիրել տողադարձի տեսակները։ Աշակերտներին ամեն դասի ընթացքում տրամադրել հինգ րոպե ժամանակ, բաժանել նախապես ընտրված բառերով թերթիկներ, որոնց վրա գրված բառերը աշակերտները պիտի տողադարձեն բոլոր հնարավոր տարբերակներով, բաժանեն վանկերի եւ որոշեն վանկի տեսակը։ Աշակերտներին հանձնարարել տանը առակից դուրս գրել բազմավանկ բառեր եւ տողադարձել բոլոր հնարավոր ձեւերով։

Հաջորդիվ ներկայացվում է Ավետիք Իսահակյանի «Կյանքից թանկ բանը» առակը։

Վիրավոր աղավնին ընկած էր աղբյուրի մոտ։ Փերին նրանից խնդրում է այն, ինչ թանկ է իր համար, դրա փոխարեն խոստանալով փրկել աղավնու կյանքը։ Աղավնին մտածում է, որ պարիկը իր կյանքն է վերցնելու, բայց համաձայնում է նրա առաջարկին։ Երբ աղավնու վերքերը բուժվում են, եւ նա սկսում է ճախրել, պարիկը նրանից խնդրում է թեւերը։ Աղավնին խնդրում է վերցնել իր կյանքը, քանի որ առանց թռիչքի կյանքը գին չունի։

-Թռի՛ր, սիրելի՛ս, ազատ ու վայրի,

Թռիր ու ասա ստրուկ աշխարհքին,

Թե ինչն է թանկը կյանքից ավելի,-

Ասաց ջրերի լուսեղեն ոգին։

Աղավնին ստեղծված է ճախրելու համար եւ ազատության խորհրդանիշն է։

Կյանքն առանց ազատության իմաստ չունի։ Առանց ճախրանքի ապրել չի լինի։

Անհնար է մարդուն զրկել ազատությունից եւ մտածել, որ նա կարող է երջանիկ լինել, ապրել իարժեք կյանքով։

Ազատություն, անկախություն, հայրենիք, միասնականություն. ահա այն կարեւորագույն արժեքներից մի քանիսը, որոնք կարեւոր նշանակություն ունեն անհատի եւ պետության ոյատեւման հարցում։ Առակի գլխավոր գաղափարը հենց այս արժեքների արժեւորում է։ Աղավնու համար թեւերը, որոնք ազատության խորհրդանիշն են, վեր են ամեն ինչից, թանկ են նույնիսկ կյանքից։

Առակի ուսուցումը կազմակերպել ԽԻԿ համակարգով։ Խթանման փուլում կիրառել «Մտագրոհ» մեթոդը։ Գրատախտակին գրել ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ բառը եւ հանձնարարել աշակերտներին նշել այն բառերը, որոնք առաջինն են ասոցացվում այդ բառի հետ։

Իմաստավորման փուլում կարելի է կիրառել «Բանավեճ» մեթոդը։ Դասարանը բաժանել երկու խմբի։ Յուրաքանչյուր խմբի հանձնարարել ներկայացնել, թե ըստ իրենց՝ որն է կյանքում ամենակարեւոր արժեքը։ Աշխատանքի համար տրամադրել տասը րոպե ժամանակ։ Ժամանակի ավարտից հետո խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքը, կատարում քննարկում։ Վերջին՝ կշռադատման փուլում կարելի է կիրառել «Հնգրոպեանոց շարադրանք» մեթոդը։ Սովորողներին տալ հինգ րոպե ժամանակ իրենց մտքերն արտահայտելու հետեւյալ թեմայի շուրջ.

«Ի՞նչ կանեի ես Աղավնու փոխարեն»։ Կշռադատման փուլի վերջում կարելի է կատարել անդրադարձ, բաժանել երեխաներին անդրադարձի թերթիկ եւ տրամադրել հինգ րոպե, այն լրացնելու համար։

Առակների ուսուցումը պետք է զուգակցել բառային եւ ուղղագրական աշխատանքների հետ։ Անհրաժեշտ է մանրակրկիտ ուսումնասիրել գրական ստեղծագործությունը, բառարաններից կամ ուսուցչի օգնությամբ գտնել անծանոթ բառերի բացատրությունը, կազմել հոմանիշային ու հականիշային զույգեր։ Առանց հայոց լեզվի անհնար է պատկերացնել գրական երկի ուսումնասիրությունը, անհրաժեշտ է այս երկու առարկաները միաձուլված ուսումնասիրել, որպեսզի հասնենք որոշակի արդյունքի։

«Տերեւներն ու արմատները» առակը մեծին հարգելու, արմատներն արժևորելու, նրանց (տատ ու պապ, ծնողներ) դերը մեր կյանքում գնահատելու մասին է։

Առակի ուսուցման ժամանակ խթանման փուլում կարելի է գրատախտակին գծել ծառ եւ առաջարկել համեմատելով ընտանիքի հետ անվանել ծառի մասերը (արմատներ-պապ,տատ, ծառի բուն-ծնողներ, սաղարթ-երեխաներ), անցկացնել քննարկում։ Այս եղանակով ներկայացումը հնարավորություն կտա սովորողների մոտ ձևավորել մեծին հարգելու եւ նրանց դերը ընտանիքի ամրության հարցում գնահատելու կարողություն։

Իմաստավորման փուլում կարելի է կիրառել «Վենի դիագրամ» մեթոդը։

Դասարանը բաժանել խմբերի եւ խմբային աշխատանք կատարել, իսկ աշխատանքի ավարտից հետո քննարկման միջոցով ամբողջացնել աշխատանքը։



Կշռադատման փուլում կարելի է կիրառել **«Քառաբաժան»** մեթոդը, որի ընթացքում աշակերտները կներկայացնեն իրենց տեսածը, լսածն ու զգացածը, կառաջարկեն նոր վերնագիր։

Առակների կարեւորությունը ուսուցման գործընթացում արժեւորելիս կարելի է հիշել միայն, որ Հիսուս Քրիստոսն իր խոսքն առավել հասկանալի դարձնելու համար հաճախ խոսում էր առակներով։ Նրա առակները իրական կյանքից վերցված պատմություններ են։

Դասագրքում ներկայացված է **«Մարդը, որը ներել չէր ուզում»** առակը։

Առակը ներողամտության, ուրիշներին օգնելու, մարդկանց դրության մեջ մտնելու եւ վատ վիճակից հանելու մասին է։ Կյանքը բումերանգ է, եւ մեր արած ամեն լավ կամ վատ արարք նույն կերպ վերադառնում է մեզ։ Ինչպես ասել է մեծն Թումանյանը **«մարդու գործն է միշտ անմահ»**, եւ այս կյանքում մեր արարքներն են կերտում մեր դիմագիծը։ Շատ կարեւոր է, որ աշակերտները այս

տարիքում հասկանան ու ամբողջովին յուրացնեն առակի գաղափարը, քանի որ այս արժեքները հսկայական նշանակություն ունեն անհատի արժեհամակարգի, ընդհանրապես մարդու բարոյական եւ հոգեկան ճիշտ զարգացման հարցում։

Առակի ուսուցման դասը կազմակերպել ԽԻԿ համակարգով։ Խթանման փուլում կարելի է կիրառել **«Անակնկալ հարցադրում»** մեթոդը եւ աշակերտներին տալ հետեւյալ հարցը՝

● Եթե ընկերդ սխալ է գործել, ի՞նչ ես անում։

Լսել սովորողների կարծիքները, փոքրիկ քննարկում անցկացնել։

Իմաստավորման փուլում կարդալ առակը եւ կատարել համապատասխան բառային եւ քերականական աշխատանք։ Այնուհետեւ առանձնացնել գլխավոր գաղափարը, բարոյախոսությունն արտահայտող մասն ու դրա շուրջ քննարկում կազմակերպել։

Կշռադատման փուլում դերային խաղ կազմակերպել, որի ժամանակ սովորողները ավելի խորությամբ կուսումնասիրեն թեման, կքննարկեն ընկերների հետո։

Վերջում կատարել անդրադարձ, հանձնարարել տնային աշխատանք։

Դասագրքում զետեղված վերջին առակը Եզոպոսի «Գյուղացին եւ իր որդիները» առակն է։

Միասնություն, համերաշխություն. ահա այն զենքերը, որոնք կօգնեն հաղթել ցանկացած չարիքի,ահա սա է առակի հիմնական բարոյախոսական իմաստը: Մինչ առակի ուսուցմանն անդրադառնալը կարելի է փոքրիկ զրույց անցկացնել աշակերտների հետ, խոսել ընտանիքի, պետության, հայրենիքի մասին: Թույլ տալ, որ նրանք ինքնուրույն ներկայացնեն այս հասկացությունները: Իմաստավորման փուլում կարելի է կիրառել «Կանխագուշակումների աղյուսակ» մեթոդը, առակը կարդալ հատվածաբար եւ լրացնել աղյուսակը: Կշռադատման փուլում կիրառել «Հինգրոպեանոց շարադրանք» մեթոդը, եւ հանձնարարել աշակերտներին ներկայացնել ընտանիքի իրենց իդեալը: Կատարել ամփոփում եւ եւս մեկ անգամ անդրադառնալ թեմային:

Առակների բարոյախոսության ճիշտ ընկալման դեպքում աշակերտները հասկանում են, որ իրենք ազատ են եւ կաշկանդված չեն , նրանք առակների մոտիվներով նկարազարդումներ են կատարում, գրքեր են կազմում, երգեր են կատարում, հարստացնում են սեփական բառապաշարը, երբեմն բացահայտում իրենց տաղանդը:

Ծնողներից շատերը մտածում են, որ իրենց երեխայի համար կարեւորագույն արժեքը, որ պիտի վերցնի դպրոցից, գիտելիքն է: Անհրաժեշտ է բացատրել Կանխագուշակումների աղյուսակ Իմաստավորման փուլում կարելի է կիրառել «Կանխագուշակումների աղյուսակ»15 մեթոդը, առակը կարդալ հատվածաբար եւ լրացնել աղյուսակը: Կշռադատման փուլում կիրառել «Հինգրոպեանոց շարադրանք» մեթոդը, եւ հանձնարարել աշակերտներին ներկայացնել ընտանիքի իրենց իդեալը: Կատարել ամփոփում եւ եւս մեկ անգամ անդրադառնալ թեմային:

Առակների բարոյախոսության ճիշտ ընկալման դեպքում աշակերտները հասկանում են, որ իրենք ազատ են եւ կաշկանդված չեն , նրանք առակների մոտիվներով նկարազարդումներ են կատարում, գրքեր են կազմում, երգեր են կատարում, հարստացնում են սեփական բառապաշարը, երբեմն բացահայտում իրենց տաղանդը:

Ծնողներից շատերը մտածում են, որ իրենց երեխայի համար կարեւորագույն արժեքը, որ պիտի վերցնի դպրոցից, գիտելիքն է: Անհրաժեշտ է բացատրել նրանց, որ գիտելիքը դառնում է

երկրորդական, երբ մենք խոսում ենք մարդ դաստիարակելու, բարոյական արժեքների մասին։ Մեզանից յուրաքանչյուրի գերխնդիրը պիտի լինի դաստիարակել խելացի, հայրենասեր, ժողովրդավար, հոգատար անհատներ, մարդիկ ովքեր կկառուցեն մեր երկրի վաղվա օրը։

Առակների ուսուցումը հսկայական մասնաբաժին ունի երեխաների մոտ այս արժեքները ձեւավորելու հարցում։

Թեմայի ուսուցման վերջնարդյունքները

Աշակերտները կկարողանան՝

● Բացատրել առակի այլաբանությունը։

● Առանձնացնել առակի գլխավոր միտքն ու ընթերցողին տրվող խրատը։

● Փոխել առակի բովանդակությունը, հավելել հերոսներ, հնարել նոր սկիզբ կամ ավարտ։

● Կգիտակցեն առակի դաստիարակչական դերը իրենց եւ շրջապատի կյանքում։

Կձեւավորեն հետեւյալ կարողունակությունները՝

● Լեզվական գրագիտության կարողունակություն

● Սովորել սովորելու կարողունակություն

● Մեդիա գրագիտության կարողունակություն

● Ինքնաճանաչողական եւ սոցիալական կարողունակություն

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Առակը ժողովրդական բանահյուսության ամենասիրելի եւ հասկանալի ժանրերից է, որում ներկայացվում են ժողովրդի մտածելակերպը, սովորույթները, չարի ու բարու, լավի ու վատի մասին պատկերացումները։

Նրանում արտացոլվել են հասարակական ու սոցիալական կյանքում եղած բազմաթիվ երեւույթներ, բացահայտվել մարդկային հոգու եւ մտքի տվայտանքները, հեգնել են երկրի հոգեւոր ու աշխարհիկ տերերին, արտահայտել երջանիկ կյանքի երազանք։ Առակներում այլաբանորեն, կենդանական,

բուսական աշխարհի միջոցով, ներկայացվում են մարդկային կյանքի որոշակի կողմեր, գովերգվում են լավը եւ քննադատում՝ վատը։

Ինչպես նշեցինք հետազոտության սկզբում, մեր նպատակն էր առակների դասավանդումը ներկայացնել նորովի, այսինքն համագործակցային մեթոդներով եւ եւս մեկ անգամ արժեւորել դրանց դերը երեխաների մեջ ժողովրդավարական արժեհամակարգի ձեւավորման հարցում։ Առակների դաստիարակչական, բարոյախրատական նշանակությունը հաշվի առնելով՝ կարելի է պնդել, որ նրանք մինչ այժմ պահպանել են իրենց արդիականությունը եւ դաստիարակչական հզոր զենք են ուսուցչի ձոռքին։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Յուրի Ամիջանյան, Ա. Սահակյան. Մանկավարժություն(ուսումնական ձեռնարկ) << Մանկավարժ >> հրատարակչություն 2005թ. էջ 9

2. <<Հայոց լեզու և գրականություն >> ամսագիր 2013 թ. համար 4 (էջ 3 Դավիթ Գասպարյան)

3. Գրիգոր Գրիգորյան . Հայ ժողովրդական բանահյուսություն 1980 թ. էջ 288, էջ 300

4. Վիքիպեդիա

5. Դ. Գյուրջինյան , Թ. Ալեքսանյան . Մայրենի 5 2019թ. էջ142, 144,148,150

6. Եզոպոս Առակներ Երևան 1990թ.

7. ՈՒսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ ք. Վանաձոր 2008թ.